



125. ԱՐԴԱՐ ՊԱՏԻԺ

Ժամանակով մոլե մե կը սիրեր զդրկեցի կնիկ: Կնկա մարդ
լե զէդ բան կը կռահեր, տղեն լե:

Տղեն պապուն ըսեց.

— Մոլի էրածն ուրին չըմ թողի, յա՛ կը խեղդիմ, յա՛ կը կոր-
ցում տեղ մե...

Պապն ըսեց.

— Օղո՛ւ, դու ուղիղ քելե, ծուռ քելողի պատիժն աստված
կիտա:

Տղեն շատ բաքլեց, աստված մոլին պատիժ չըտվեց:

Օր մե տղեն առավ շուշե մե ռազի, գողտուկ մոլի քետեհն գնաց,
քելավ մինարի ծեր: Մոլեն օր զձեռ դրեց քանկըջին՝ «Ալլահ ու
աբբա՛ր» կանչեց, տղեն զմոլի քոտք վերցուց, գլորեց ցած, էղավ
ինչօր լոշ, կպավ գետին:

Նամագի էկողներ տեսան զմոլեն փռքվուկ վըր գետնին, շատ
ափսոսացին, եր քելան մինարի ծեր՝ տեսան զռաղու շուշեն, ըսին.

— Մոլեն ռաղի է խմի, սարխոշցի, քընկեր է ցած, մեռեր է,
օր հմալ է՝ տեղն է, շարիաթ պզծողի պատիժն աստվածն է տվի:

Պապ ուր տղին ըսեց.

— Տեսա՞ր, լա՛ո, աստված ի՛մալ պատժեց, կըսին մինարից
քընգեր է ցած, մեռեր է:

Տղեն ըսեց.

— Հե՛ր օրնած, օր աստծուն մնե՛ր, մոլեն դըռ շա՛տ կը սիրեր
զիմ մամ: